

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 19/4

15 ապրիլի 2014 թ.

Քննարկվեց Ա/Ձ Վարդան Գևորգյանի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 15.11.2013 թ-ի թիվ 1411470 վարչական ակտի դեմ:

Ա/Ձ Վարդան Գևորգյանի գանգատում բերված փաստարկները.

ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 5-րդ բաժնի կալմից Ա/Ձ Վարդան Գևորգյանի մոտ իրականացված ստուգման արդյունքներով 15.11.2013 թ-ին կազմվել է «Հարկային պարտավորությունների առաջադրման և պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ» թիվ 1411470 վարչական ակտը: Համաձայն նշված ակտի Ա/Ձ Վարդան Գևորգյանը ք.Երևան, Փեթակ շուկայի կետում տեղադրել է դրամական շահումով խաղային ապարատ, որի համար չունի օրենքով նախատեսված համապատասխան լիցենզիա: Ա/Ձ Վարդան Գևորգյանը ապարատի մեջ տեղադրել է շարիկներ, որոնց վրա գրված են թվեր և հաճախորդը շարիկը դուրս բերելուց հետո ստանում է շարիկի վրա գրված թվին համապատասխան գումար: Ապարատը տեղադրվել է 2013 թ-ի հոկտեմբերի 15-ից և մինչև արձանագրման պահը Վարդան Գևորգյանի համախառն եկամուտը կազմել է 60.000 դրամ: Հիմք ընդունելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ պարբերությունները Ա/Ձ Վարդան Գևորգյանին առաջադրվել է 55.000.000 դրամի տուգանք:

Նշված վարչական ակտը Վարդան Գևորգյանը հրաժարվել է ստորագրել:

Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ Շենգավիթի հարկային տեսչության 30 հոկտեմբերի 2013 թ-ին տրված թիվ 77/300913002525/1 արտոնագրի, Վարդան Գևորգյանը հաշվառված 17 հունվարի 2013 թ. ՀՎՀՀ 35105996, 2013 թ-ի ընթացքում հանդիսանում է արտոնագրային վճար վճարող: Նշված արտոնագրի մեջ Վարդան Գևորգյանի գործունեության տեսակը նշված է մետաղադրամով շահագործվող ավտոմատների միջոցով խաղերի կազմակերպում:

«Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի հավելված 7-ի 1-ին կետի համաձայն արտոնագրային վճարով հարկվող գործունեության տեսակներն են՝

10) մետաղադրամով շահագործվող ավտոմատների միջոցով խաղերի կազմակերպման գործունեությունը (բացառությամբ շահումով խաղերի և խաղատների գործունեության):

Աույն հավելվածի հմաստով՝

9) մետաղադրամով շահագործվող ավտոմատների միջոցով խաղերի կազմակերպման գործունեություն է համարվում գվարճությունների հանգստի կազմակերպման և այլ վայրերում մետաղադրամով շահագործվող ավտոմատների միջոցով խաղերի կազմակերպման գործունեությունը:

Ա/Ձ Վարդան Գևորգյանի կողմից շահագործվող ապարատի մեջ տեղադրված են եղել շարիկներ, որոնց վրա գրված են թվեր և հաճախորդը շարիկը դուրս բերելուց հետո ստանում է շարիկի վրա գրված թվին համապատասխան համարակալված փափուկ խաղալիքը:

15.11.2013 թ-ի թիվ 1411470 վարչական ակտի մեջ նկարագրված արարքը, չի համապատասխանում իրականությանը, քանզի իրականում խաղի մասնակիցը ստանում է ոչ թե շարիկի թվին համապատասխան գումար, այլ շարիկի թվին համապատասխան համարակալված փափուկ խաղալիքը:

ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 17.04.2008 թ-ի թիվ 1 պաշտոնական պարզաբանման համաձայն, այն մեքենայացված խաղը, որի մասնակցի (մասնակիցների) շահելու հնարավորությունը կախված է բացառապես այդ խաղի մասնակցի (մասնակիցների) գործողություններից և խաղի շահման որևէ փուլ չի գտնվում մասնակցի (մասնակիցների) վերահսկողությունից կամ ազդեցությունից դուրս և այդ մեքենայացված խաղը որևէ կերպ չի կարող ազդել խաղի մասնակցի (մասնակիցների) շահելու հնարավորության վրա, որի շահումը

հանդիսանում է «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (USԳ ԱԱ) դասակարգչի 9503 41 000, 9503 49 100, 9503 49 300 ծածկագրին դասվող ապրանք՝ շահումով խաղ չի համարվում:

Քանի որ Վարդան Գևորգյանը իրականացրել է մետաղադրամով շահագործվող ավտոմատների միջոցով խաղերի կազմակերպում, իսկ շահումը եղել է «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (USԳ ԱԱ) դասակարգչի 9503 41000, 9503 49 100, 9503 49 300 ծածկագրին դասվող ապրանք, հետևաբար վերջինիս գործունեությունը չի կարող համարվել լիցենզավորման ենթակա:

Վարդան Գևորգյանը համարվում է արտոնագրային վճար վճարող և օրենքով սահմանված կարգով կատարել է իր հարկային պարտավորությունները:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի համաձայն, հարկային օրենսդրության խախտումն առաջացնում է պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, վարչական իրավախախտման համար տույժը նշանակվում է կատարված իրավախախտման համար պատասխանատվություն նախատեսող նորմատիվ ակտով սահմանված շրջանակներում, վարչական իրավախախտումների մասին օրենսդրության հիմունքներին, նույն օրենսգրքին և վարչական իրավախախտումների վերաբերյալ մյուս ակտերին ճիշտ համապատասխան:

15.11.2013 թ-ի թիվ 1411470 վարչական ակտով Վարդան Գևորգյանին առաջադրվել է տուգանք լիցենզավորման ենթակա գործունեությունն առանց լիցենզիայի իրականացնելու համար: Մինչդեռ Վարդան Գևորգյանի կողմից իրականացվող գործունեությունը լիցենզավորման ենթակա գործունեություն չէ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասից հետևում է, որ որպես անձի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքի սահմանադրական նորմի իրացման երաշխիք, օրենքով սահմանված է այդ իրավունքի խախտմամբ ընդունված վարչական ակտի անվավեր ճանաչման հնարավորություն:

Հաշվի առնելով վերոգրյալը Վարդան Գևորգյանը խնդրում է վերադասության կարգով անվավեր ճանաչել 15.11.2013 թ-ի թիվ 1411470 վարչական ակտը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները, եկավ եզրակացության, որ գանգատը հիմնավոր չէ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 15.11.2013 թ-ի թիվ 1411470 վարչական ակտով (այսուհետ նաև վարչական ակտ) արձանագրվել է, որ Ա/Ձ Վարդան Գևորգյանը ք.Երևան, Փեթակ շուկայի ներսում տեղադրել է դրամական շահումով խաղային ապարատ, որի համար չունի օրենքով նախատեսված համապատասխան լիցենզիա: Վերջինս ապարատի մեջ տեղադրել է շարիկներ, որոնց վրա գրված են թվեր: Հաճախորդը շարիկը դուրս բերելուց հետո ստանում է շարիկի վրա գրված թվին համապատասխան գումար: Ապարատը տեղադրվել է 2013 թ-ի հոկտեմբերի 15-ից և մինչև արձանագրման պահը Ա/Ձ Վարդան Գևորգյանի համախառն եկամուտը կազմել է 60.000 դրամ:

Հիմք ընդունելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ պարբերությունները, այն է. «Օրենքով սահմանված լիցենզավորման ենթակա գործունեությունն առանց լիցենզիայի իրականացնելու կամ առանց թույլտվության կամ

առանց լիցենզիայի ընդերքը կամ բնական պաշարներն օգտագործելու դեպքերում կազմակերպություններից և անհատ ձեռնարկատերերից գանձվում է տուգանք՝ լիցենզիայի կամ թույլտվության տրման համար օրենքով սահմանված պետական տուրքի դրույքաչափի տասնապատիկի չափով, բայց ոչ պակաս հինգ հարյուր հազար դրամից: Սույն հոդվածի առաջին (եթե իրականացվող գործունեությունն օրենքով ենթակա է լիցենզավորման) և երկրորդ պարբերություններում նշված խախտումներ հայտնաբերելու դեպքերում խախտումներ կատարած անձանցից գանձվում է նաև լիցենզավորման համար օրենքով սահմանված պետական տուրքի գումարի չափով վնասի հատուցում», Ա/Ձ Վարդան Գևորգյանին առաջադրվել է 55.000.000 դրամի տուգանք:

Քննարկման ընթացքում նշվեց, որ գանգատում բերված փաստարկը, որ. «Ա/Ձ Վարդան Գևորգյանը իրականացրել է մետաղադրամով շահագործվող ավտոմատների միջոցով խաղերի կազմակերպում, իսկ շահումը եղել է «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 9503 41000, 9503 49 100, 9503 49 300 ծածկագրին դասվող ապրանք, հետևաբար վերջինիս գործունեությունը չի կարող համարվել լիցենզավորման ենթակա», հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ:

«ՀԱ ՊԵԿ ՕՀՎ 5-րդ բաժնի օ/ւ-ներ Գեղամ Ղազարյանը և Արման Միքայելյանը, մասնակցությամբ ընթերականեր Գառնիկ Մկրտչյանի և Արարատ Կոծինյանի (նշված են վերջիններիս հաշվառման հասցեները), 12.11.2013 թ-ին կազմել են արձանագրություն, որում մասնավորապես նշվել է, որ 2013 թ-ի նոյեմբերի 12-ին ք.Երևան, Փեթակ շուկայի ներսում հայտնաբերվել է դրամական շահումով ապարատ: Վերջինիս մեջ լցված են գունավոր շարիկներ, որոնց վրա գրված են թվեր: Շարիկներից որևէ մեկը հանելու դեպքում այն հաճախորդին չի տրվում, այլ դրա փոխարեն, վրայի գրված թվերին համապատասխան հաճախորդին տրվում է ՀՀ դրամ: Այսինքն, եթե հանված շարիկի վրա գրված է 002 կամ 006, ապա վերջին թվին համապատասխան ՀՀ դրամ է տրվում հաճախորդին՝ 002-ի դեպքում 200 ՀՀ դրամ, 006-ի դեպքում 600 ՀՀ դրամ: Վերը նշված ապարատը պատկանում է Ա/Ձ Վարդան Գևորգյանին: Ըստ Ա/Ձ Վարդան Գևորգյանի, նա վերը նշված դրամական շահումով ապարատը շահագործելու համար չունի համապատասխան լիցենզիա: Ապարատը տեղադրված է 2013 թ-ի հոկտեմբերի 15-ից և մինչև օրս Ա/Ձ Վարդան Գևորգյանի համախառն եկամուտը կազմում է 60.000 դրամ: Արձանագրությունն ընթերցվել է բարցրածայն և ստորագրվել վերոգրյալ անձանց կողմից:

Սույն գործում առկա են նաև այլ արձանագրություններ, որոնք նույնպես հիմնավորում են վարչական ակտով արձանագրված խախտումը Ա/Ձ Վարդան Գևորգյանի կողմից կատարված լինելու հանգամանքը:

Ելնելով վերոգրյալից Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում, ըստ էության, ապացուցվել է այն փաստը, որ Ա/Ձ Վարդան Գևորգյանը իրականացրել է մետաղադրամով շահագործվող շահումներով խաղի կազմակերպում, և շահումը եղել է ոչ թե «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 9503 41000, 9503 49 100, 9503 49 300 ծածկագրին դասվող ապրանք, այն է՝ շարիկի թվին համապատասխան համարակալված փափուկ խաղալիք, այլ՝ ՀՀ դրամ:

Հարկ է նշել, որ համաձայն «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի 15-րդ բաժնի 2-րդ կետի, շահումներով խաղերի կազմակերպումը հանդիսանում է լիցենզավորման ենթակա գործունեության տեսակ:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Վարդան Գևորգյանը իրականացրել է մետաղադրամով շահագործվող շահումներով խաղի կազմակերպման գործունեություն, սակայն չի ունեցել չի ունեցել նշված գործունեությունը կազմակերպելու համար համապատասխան լիցենզիա: Արդյունքում վարչական ակտով կիրառվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցը:

Հանձնաժողովի 01.04.2014 թ-ի նիստի քննարկման արդյունքում սույն գործի վերաբերյալ ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն վարչական ակտը թողնվել է անփոփոխ:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի «Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին» N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, սույն գործի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից ընդունված որոշման նախագիծը և առնչվող նյութերը (գանգատի փաթեթը) ուղարկվել են վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ (այսուհետ՝ Գանգատարկման խորհուրդ):

Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է դրական եզրակացություն:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

Վարչական ակտը թողնել անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ